# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018թ. հունիսի 6-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 4-րդ Բ դասարանի տարեվերջյան ծնողական ժողովը։

Ժողովին ներկա էին 17 ծնող։ Ժողով չէին եկել Պետրոս Պետրոսյանի և Ռայա Խաչատրյանի ծնողները։

Ժողովին մասնակցում էր տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների տեղակալ Զոյա Գևորգյանը։

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2-րդ կիսամյակի և գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփում
2. Ընթացիկ հարցեր

1.Լսեցին- 2-րդ կիսամյակի և գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփման հարցը

Դասղեկ Հ. Սարգսյանը ծնողներին հայտնեց իրենց երեխաների 2-րդ կիսամյակի, տարեկան գնահատականների և <<Մայրենի>>, <<Մաթեմատիկա>> առարկաների գիտելիքների ստուգումից ստացած գնահատականների մասին։ Ասաց, որ դասարանում կան 3 գերազանցիկ և 5 հարվածային աշակերտներ, քանի որ Նարե Հովսեփյանը չպահպանեց իր գերազանցիկությունը։ Գիտելիքների ստուգման արդյունքում ստացավ <<8>> գնահատականներ։ Հ. Սարգսյանը հորդորեց ծնողներին լինել էլ ավելի հետևողական և խստապահանջ իրենց երեխաների նկատմամբ։

Որոշեցին.- Լինել հետևողական և ավելի ուշադիր, քանի որ միջին դպրոցում պահանջները ավելի խիստ են լինելու։

2. Լսեցին- Ընթացիկ հարցեր

ա) <<Հրաժեշտ տարրական դպրոցին>> միջոցառման տպավորությունների մասին հարցը

Հ. Սարգսյանը նախ ինքը հայտնեց իր կարծիքը։ Նա ասաց որ գոհ էր միջոցառումից, քանի որ կարճ ժամանակահատվածում կարողացան նախապատրաստվել և՛ գիտելիքների ստուգմանը, և՛ միջոցառման կազմակերպմանը։

Միջոցառումից ստացած տպավորությունների մասին իրենց կարծիքները հայտնեցին ծնողներ Մարինե Ծառուկյանը, Սյուզի Դավթյանը, Անի Փանոսյանը և Դավիթի տատիկը։

Որոշեցին. - Համագործակցել նոր դասղեկի հետ և աջակցել նրան նոր միջոցառումներ կազմակերպելու հարցում:

բ) Հ. Սարգսյանը շնորհակալություն հայտնեց ծնողներին 4 տարվա համատեղ աշխատանքի համար, որոնք անցան վստահության և փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտում: Նա ասաց, որ արել է ամեն ինչ, որ իրենց երեխաները բացի զուտ ուսումնական գիտելիքներից բացի ,ստանան այլ կարևոր արժեքներ հայրենասիրություն, ազնվություն, ընկերասիրություն,հանդուրժողականություն, փոխադարձ հարգանք մեկը մյուսի նկատմամբ: Այդ նպատակով կազմակերպվել են էքսկուրսիաներ,այցելություններ թանգարաններ, մշակույթի օջախներ:

Հ. Սարգսյանը խոսեց նաև տարեվերջյան էքսկուրսիա կազմակերպելու մասին: Նա առաջարկեց էքսկուրսիա կազմակերպել Էջմիածին-Ակնա լիճ-Սարդարապատ երթուղով: Ծնողները համամիտ եղան ուսուցչի առաջարկին: Քննարկվեց տրանսպորտային միջոցի, սննդի ձեռք բերման ծախսերի համար անհրաժեշտ գումարի չափը:

Որոշեցին. - Էքսկուրսիայի կազմակերպման աշխատանքը հանձնարարել ծնողխորհրդի նախագահ Մարինե Շառուկյանին և խորհրդի մյուս անդամներին:Կազմակերպչական աշխատանքների համար յուրաքանչյուր աշակերտից հավաքել 3500դրամ, այնուհետև տեղեկացնել դասղեկին, որոշել օրը և իրականցնել էքսկուրսիան:

Ծնողխորհրդի նախագահ՝ / Մ. Շառուկյան/

Քարտուղար՝ / Ա. Փանոսյան/